Հիրտեոս մեկ հարթությունով

ԲԱԳՐԱՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԳԱԼՍՏԱՆՅԱՆ

Հարեւոս մեկ հարթելով

ԵՐԵՎԱՆ
2025

ՀՏԴ 271.72:94(479.25)
ԳՄԴ 86.373.2+63.3(5Հ)
Գ 206

Գալստանյան Բագրատ Արքեպիսկոպոս
Գ 206 Ինքներս մեզ հաղթելով / Բագրատ Արքեպիսկոպոս Գալստանյան.– Եր.: Newmag, 2025.– 212 էջ:

Այս գիրքը Հայաստանի նորագույն պատմության անկյունաքարային դրվագների վերլուծությունն է պետություն–եկեղեցի–ազգ փոխգործակցության առանցքի տեսանկյունից: Գրքում մեկտեղված են հեղինակի զրույցները և հոդվածները պետության, ժողովրդի, Հայ Առաքելական եկեղեցու թեմաներով: Գիրքը Հայաստանի առջև ծառացած հիմնախնդիրները լուծելու ուղեցույց է, ճանապարհ դեպի ավելի ամուր և հոգևոր արժեհամակարգով զինված Հայաստան: Հեղինակն այս աշխատությամբ ընթերցողին պատգամում է հանուն Հայաստանի հաղթահարել բոլոր խոչընդոտները, հիշեցնում, որ պայքարի առաջին քայլը հաղթելն է, ինքներս մեզ հաղթելը:

ՀՏԴ 271.72:94(479.25)
ԳՄԴ 86.373.2+63.3(5Հ)

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ISBN 978-9939-967-85-1
Բագրատ Արքեպիսկոպոս Գալստանյան «Ինքներս մեզ հաղթելով» © 2025
«Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքը ձեռք է բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

Գրքի առաջին երկու գլխում ներառված են հատվածներ հեղինակի «Ավետյաց երկրի տեսիլքով» (Երևան, 2023) և «Միտք և բանք» (Վաղարշապատ, 2024) գրքերից:

Գիրքը հրատարակվել է Ex Oriente Հայաստանի արևելագետների միության, Սանկտ Պետերբուրգի տարածաշրջանային Հայ ազգային մշակութային ինքնավարության, տիար Վահե Դարբինյանի և բարեկամների աջակցությամբ:

Բովանդակություն

Նախաբան | Արսեն Գասպարյան 9

Ի. ՄԻՏՔ 17

Զրույց Ա | ԵՍ ՏԵՍԵԼ ԵՄ ՀԱՂԹԱՆԱԿԸ 19
2020-ին «պետական այրերը» չայցելեցին առաջնագիծ ... 21
Եկեղեցին հիշողություն ունի… Հոգևորականությունն
առաջնագծում էր 23
«Այլևս երբեքը» որպես համակարգ 26

Զրույց Բ | ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԴԱՐՁ 29
Ինչն ենք փոխարինում ինչով 34
Սա քաղաքականություն չէ 36
Ապաշխարություն և դարձ է անհրաժեշտ՝
«երջանիկ փոփոխություն» 37
Քրիստոնեությունը մեզ այլություն է տվել 39
Քրիստոնեությունն ուժեղ մարդու կրոն է 41
Քրիստոնեությունն առաքինության մասին է 49

Զրույց Գ | ՀԱՂԹՈՂԻ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ…
ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՆ ՈՒԺ Է ՍՏԱՆՈՒՄ ԵՌԱԲԼՈՒՐԻՑ 54
Ցեղասպանության գաղափարը պետք է դառնա
համակարգ 56

«Մոռացված ազգ» լինելու հայեցակարգով պետք է հասնենք «Հաղթանակած ազգ» լինելու տեսլականի իրականացմանը 61

Զրույց Դ | ՆԱԽԱՍԱՐԴԱՐԱՊԱՏՑԱՆ ՕՐԵՐ ԵՆՔ ԱՊՐՈՒՄ ...65
Եթե չլիներ Սարդարապատը, Հայաստան բառը լոկ հուշ կմնար 70
Հոգևոր Հայաստանը հաղթելու է 72

Զրույց Ե | ՄԵՆՔ ԱՆՊԱՅՄԱՆ ԿՎԵՐԱԴԱՌՆԱՆՔ ՇՈՒՇԻ ...73
Չեմ մոռանալու հանուն քեզ, Հայաստան, չեմ ներելու հանուն քեզ, Արցախ, չեմ ներելու հանուն քեզ, Շուշի 79

Զրույց Զ | ՄԵՆՔ ԸՆՏՐՎԱԾ ԱԶԳ ԵՆՔ 81
Մարդն արժեք չունի առանց Աստծո և Հայրենիքի 88

II. ԲԱՆՔ 91

ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔ 93
(հոգևոր, բարոյագիտական, կենսաէթիկական հայացք)
Ա. Սուրբ Երրորդությունը՝ ընտանիքի նախատիպ 94
Բ. Ընտանիքը որպես Խորհուրդ՝ Սուրբ Պսակ 96
Գ. Ընտանիքը՝ հանրային կյանքի նախօրինակ և մանրապատկեր 99
Դ. Հայաստանի չծնվող մայրերը 100

ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

Ընդհանուր դրույթներ 109
Ա. Կրթության ընկալումը և գնահատումը 113
Բ. Գիտության ընկալումը և գնահատումը 127
Գ. Մշակույթի ընկալումը և գնահատումը 131
Դ. Կրթությունն առաքինի մարդ կերտելու արվեստն է ... 137

ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ա. Պատմական ակնարկ 143
Բ. Հայ եկեղեցու ընկալումը հիվանդության
և առողջապահության մասին 145
Գ. Բժշկի բարոյական կերպարը 147
Դ. Աստվածաբանություն և կենսաբարոյագիտություն .. 150
Ե. Աստվածաբանության ներդրումն
առողջապահական համակարգում 160

ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՆԵՐԴԱՇՆԱԿ 166

Ա. Աստվածաշնչյան եզրաշերտը.
արարչագործության սրբազնությունը 167
Բ. Էկոլոգիան որպես բարոյականության հարց
և մարդու պատասխանատվությունը 170
Գ. Հայ եկեղեցին և բնապահպանությունը 175
Դ. Թափառող աղբը 177
Ե. Ապագայի հույսը 178

III. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻՆ
ՆԵՏՎԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ 181

Ա. ԽՆԴԻՐԸ 183
**Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ
ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ** 185
1. Ազգային ինքնություն 185
2. Պետականություն 186
3. Հասարակություն 188
4. Զանգվածային լրատվամիջոցներ, համացանց 189
5. Տնտեսություն 191
6. Շրջակա միջավայր, բնապահպանական հարցեր 193
7. Դատական համակարգ 195
8. Մարդկային իրավունք 197
9. Ընտանիք 198
10. Առողջապահություն 201
11. Պատերազմի և խաղաղության ընկալումը 203
12. Կրթություն, գիտություն, մշակույթ 206

Ծանոթագրություններ 207

ՆԱԽԱԲԱՆ

Մարդն անմահ է, նրա փրկությունը մահից հետո է, պետությունն անմահություն չունի, նրա փրկությունը հիմա է կամ երբեք։

Կարդինալ Ռիշելյե

Սիրելի՛ ընթերցող,

«Սրբազան պայքար» շարժման առաջնորդ Բագրատ Արքեպիսկոպոս Գալստանյանի այս հատորն ինքնաբավ ազգային ու քաղաքական միտք ստեղծելու դրսևորում է, ամուր հենված է սեփական անցյալի վրա, ունի ներուժ ստեղծելու ներկան վերահսկող ու ապագայի առաքելությունը հստակ պատկերացնող իրատես ազգային վերնախավ, որը կարող է առաջնորդել մեր ժողովրդին: ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իմ դասընկեր Տիգրան Հայրապետյանը դեռ 1993-ին գրում էր, որ «սեփական միտք չունենալը նշանակում է առաջնորդվել օտարի մշակած, ձևակերպած և առաջադրած գաղափարով ու մտքով, որ, բնականաբար, երբեք չի ծառայում տվյալ ժողովրդի շահերին»[1]: Հայաստանի համար իր ոչ բարենպաստ աշխարհագրական դիրքով, տնտեսական, արտադրական հզորություններ զարգացնելուց, բնակչության աճն ապահովելուց ու զորեղ պաշտպանության բյուջե ունենալուց բացի՝ սեփական ազգային միտքն է, որ կապահովի ժողովրդի ինքնակառավարման ընդունակության

աստիճանը, քաղաքակրթության պատկանելությունը և, վերջապես, *ազգային պետության* ստեղծումը:

Ամերիկացի սոցիոլոգ և քաղաքագետ Չարլզ Թիլին իր «Պարտադրանք, կապիտալ և եվրոպական պետություններ. AD 990-1992» նշանավոր գրքում գրում է. «Պետությունը եղել է աշխարհի ամենամեծ և ամենահզոր կազմակերպությունն ավելի քան 5000 տարի»[2]: Մեկ այլ հանրահռչակ ամերիկյան քաղաքագետ Ջոն Միրշայմերը պնդում է, որ այսքան լայն սահմանումը չի կարող արձանագրել կարևոր տարբերությունները բազմատեսակ քաղաքական միավորների միջև, որոնք գոյություն են ունեցել Եվրոպայում և այլ տարածաշրջաններում պատմության ընթացքում: Փոխարենը, Միրշայմերը սահմանափակում է *պետություն* եզրն իրական քաղաքական միավորով, որը սկսեց ձևավորվել Եվրոպայում 1500-ականների սկզբին և, ի վերջո, տարածվեց աշխարհով մեկ: Այն զգալիորեն տարբերվում է իր բազմաթիվ նախորդ տարատեսակներից, որոնք ներառում են քաղաքպետություններ, կայսրություններ, ցեղեր, իշխանություններ, դքսություններ, ֆեոդալական միապետություններ և այլն: Միրշայմերն իր «Մեծ մոլորություն. լիբերալ երազանքներ և միջազգային հարաբերություններ» գրքում քննարկում է պետության երկու ձև՝ *տոհմական պետությունը*, որը գերակշռել է մոտ 1500-1800 թթ., և *ազգային պետությունը*, որը փոխարինել է տոհմականին[3]:

Մենք՝ հայերս, ունեցել ենք Երվանդունիների, Արտաշեսյանների, Արշակունիների, այնուհետև Բագրատունիների տոհմական պետությունները դեռ մեր թվարկությունից առաջ և հետո: Իսկ 1375-ին, Կիլիկիայի հայկական թագավորության

կործանումից հետո, մենք հայոց տոհմական պետությունն ազգային պետությամբ փոխարինելու հնարավորություն ստացանք միայն 20-րդ դարի վերջում:

Խորհրդային Միության կազմալուծումն առաջ բերեց անկախ Հայաստանը: Մենք անմիջապես պետք է կերտեինք մեր ազգային պետությունը և այս պետության հայերին: Մենք ազգային պետություն ստեղծելու համար ունեինք բոլոր հիմնարար առանձնահատկությունները, որոնք դարերով պահել էինք և զարգացրել: Այս յուրահատկությունների համաստեղությունն է տարբերում մեզ մյուսներից:

Հայոց լեզուն և այբուբենը, Հայ առաքելական եկեղեցին և քրիստոնեությունը, միասնության և գերազանցության զգացումը, մեր սրբազան պարածքը, ներառյալ Արցախը, առանձնահատուկ մշակույթը, պատմությունը և, անշուշտ, ինքնիշխանությունը:

Բայց ինչպե՞ս ստացվեց, որ մեր միասնության զգացումը չհիմնվեց պետության նկատմամբ եռանդուն հավատարմության վրա: Ինչպե՞ս ստացվեց, որ բնակչության գիտակցությունից չվերացան երևանցի, լոռեցի, ղարաբաղցի, ախպար և այլ ըմբռնումները: Ինչպե՞ս ստացվեց, որ, արտաքին աշխարհի հետ գործ ունենալիս, չկարողացանք հանդես գալ որպես մեկ համատեղ միավոր՝ Հայաստան, Արցախ և սփյուռք: Ինչպե՞ս եղավ, որ չդադարեցինք առասպելագործությունը և չկենտրոնացրեցինք լավագույն *մարդկային կապիտալը* Հայաստանում: Ինչո՞ւ 1994-ի հաղթանակից հետո մեր երկրում այդպես էլ չձևավորվեց զինվորական վերնախավ: Ինչպե՞ս եղավ, որ տասնյակ հազարավոր հայեր, սոցիալական

ցանցերում կամ միմյանց հետ հաղորդակցվելիս, հանկարծ սկսեցին գրել կյուրեղագիր կամ էլ լատինատառ հայերեն: Ինչպե՞ս ստացվեց, որ գիտությունը և կրթությունն իրենց տեղը զիջեցին անդաստիարակ ու գավառամիտ մի զանգվածի: Ինչպե՞ս եղավ, որ 2021-ի խորհրդարանական ընտրություններին մոտ 680 հազար մարդ իր ձայնը տվեց պատերազմում պարտված և մեր հազարավոր զինվորների կյանքից հեռանալու համար պատասխանատու քաղաքական ուժին, իսկ մեկ միլիոն 200 հազար մարդ էլ նախընտրեց մնալ տանն ու չքվեարկել:

Այս բոլոր հարցերի պատասխանը միակն է՝ տարիներ շարունակ փողն ու պաշտոնն ավելի վեր դասվեցին Հայաստանում, քան Աստված, հայրենիքը և հավատքը...

Մենք պարտավոր ենք հասարակության այս դեգրադացիան արգելակել: Մենք պատասխանատու ենք մեր զավակների և երիտասարդ սերնդի առջև, պարտավոր ենք արագ հաղթահարել այս քաղաքակրթական ճգնաժամը և սկսել մեր երկրի բոլոր ոլորտների ռեֆորմացիան: Ազգային պետականությունը հին կենսակերպով կառուցել հնարավոր չէ: Բագրատ Արքեպիսկոպոս Գալստանյանի անկեղծ զրույցների շարքը մեր այսօրվա դառն իրականության և գողացված ուրախության ժամանակաշրջանում նոր մտածողության ու հոգեբանության պատվիրաններ է կրում Հայաստանի և սփյուռքի համար, և, ամենակարևորը, թարմ կենսակերպ, որոնց զուգադրությունն ունակ է ուժ ու հավատք տալ փակուղում հայտնված մեր ժողովրդին:

Այս հատորի առաջին գլխում տեղ են գտել Սրբազան Հոր զրույցներն ու մտքերը 2020 թ. պատերազմի հետևանքները հաղթահարելու, «Այլևս երբեք» համակարգ ձևավորելու, քրիստոնեության, որպես ինքնության վերադարձի ուղու և քաղաքական սթափ ու նպատակամղված գործողությունների մասին, նպատակ ունենալով հայկական պետականության կառուցման առավելագույն արդյունավետությունն ապահովելը:

Հատորի երկրորդ գլխում Բագրատ Արքեպիսկոպոս Գալըստանյանի հոդվածները քննարկում են Հայ Առաքելական եկեղեցու մոտեցումները՝ ամրապնդելու համար ընտանիքի ինստիտուտը, որը միություն է հիմնված սիրո և ազատության վրա: Հայ ընտանիքն է կոչված պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու մեր ազգային, հոգևոր և քրիստոնեական ավանդույթները: Մյուս հոդվածներում քննության են առնվում եկեղեցու դերը կրթության, գիտության, մշակույթի, առողջապահության ու բնապահպանության ոլորտներում, դրանք բարեկարգելու և արմատական վերափոխման ենթարկելու խնդիրները: Այս բնագավառներում Հայ առաքելական եկեղեցին կարող է և պետք է կարևոր դերակատարություն ունենա ազգային պլատֆորմ զարգացնելու գործում:

«Քրիստոնեական արժեհամակարգին նետված մարտահրավերներ» խորագրով երրորդ գլուխը կազմված է Սրբազան Հոր համակարգված հանձնախմբի կողմից, որի նպատակն է ներկայացնել քրիստոնեության արժեհամակարգին տարբեր ոլորտներում նետված մարտահրավերների հանդեպ Հայ Եկեղեցու մոտեցումները, որոնք ունեն գաղափարախոսական ու ծրագրային բնույթ:

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark